ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ընդդեմ 168.am և ArmDaily.am լրատվամիջոցների՝ ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանի դիմումի վերաբերյալ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը՝ ընդդեմ 168.am և ArmDaily.am լրատվամիջոցների: Ըստ դիմողի՝ 168.am և ArmDaily.am լրատվական կայքերում 2019թ. մայիսի 29-ին տեղ են գտել հրապարակումներ, որոնցում ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը:

1. ԸՆԴԴԵՄ 168.AM ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ԲՈՂՈՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դիմողն իր բողոքում նշել է. «168.am լրատվական կայքում մայիսի 29-ին ժամը 21:32-ին տեղադրված «Ի՞նչ էին քննարկում ՀՀ վարչապետի խոսնակն ու Պյոտր Սվիտալսկին դատարանների մուտքերն արգելափակելու նախընթաց երեկոյան» վերնագրով հրապարակման (https://168.am/2019/05/29/1129356.html) վերջին տողում նշվում է՝ «Ինչպես ավելի վաղ նշել էինք՝ դիվանագիտական լեզվով ասած՝ սա նշանակում է՝ Սահմանադրական կարգ է խախտվել, որն ընդունելի չէ»: Խնդրում եմ քննության առնել նաև այս հրապարակումը և ներկայացնել մասնագիտական էթիկայի դիտորդ մարմնի կարծիքը նշված նախադասության վերաբերյալ»:

Քանի որ դիմողը հրապարակման մեջ նշված փաստերի վերաբերյալ որևէ առարկություն չի ներկայացրել, այլ միայն վիճարկում է գնահատողական դատողություն հանդիսացող մեկնաբանությունը, ապա ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, հիշեցնելով, որ լրատվամիջոցների առաքելությունը ոչ միայն

տեղեկություններ և գաղափարներ տարածելն է, այլ նաև դրանք վերլուծելը, մեկնաբանելը, գնահատելը, որոշեց տվյալ բողոքով քննություն չիրականացնել:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը պարզաբանում է, որ հնարավոր չէ գնահատել կարծիքի, գնահատողական դատողության ճիշտ կամ սխալ, էթիկական կամ ոչ էթիկական լինելը, եթե այդ գնահատականը վիրավորանք չի պարունակում: Տվյալ դեպքում նման բան առկա չէ:

2. ԸՆԴԵՄ ARMDAILY.AM ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ԲՈՂՈՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. ArmDaily.am առցանց լրատվամիջոցը 2019թ. մայիսի 29-ին **ժամը 14:17-ին** հրապարակել է «Փաշինյանը պաշտոնական ճաշին մասնակցել է. օրակարգ չի փոխվել» (https://www.armdaily.am/?p=51108&l=am) վերտառությամբ նյութ, որում ՀՀ վարչապետի մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանը հերքում է Ղազախստանում վարչապետի օրակարգի փոփոխության մասին լուրերը՝ նշելով. «Փաշինյանը արդեն մասնակցել է ճաշին ու որևէ մտադրություն չի եղել փոխել օրակարգը: Հիմա Փաշինյանը դեսպանությունում հայ գործարարների հետ հանդիպման է: Քննարկում են տարբեր ոլորտներում ներդրումային ծրագրեր իրականացնելու հարցը»:

2. Նույն օրը, ժամը **14:39-ին** նույն լրատվամիջոցը հրապարակել է «Ինչ է կատարվել Փաշինյանի Ղազախստան այցի ժամանակ. պատվիրակությունը վերադառնում է Հայաստան» (https://www.armdaily.am/?p=51114&l=am) նյութը, որում, մասնավորապես, նշված է. «ArmDaily.am-ի տեղեկություններով՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Ղազախստան հարթ չի անցել: Մեզ հայտնի դարձավ, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստից հետո ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հանդիպում է ունեցել բոլոր երկրների ղեկավարների հետ, բացի Փաշինյանից, ինչի պատճառով Հայաստանի վարչապետը հրատապ չեղարկել է մյուս հանդիպումները և վերադառնում է Հայաստան: Մեզ նաև հայտնի դարձավ, որ Փաշինյանը չեղարկել է այլ օրակարգային հանդիպումները, մասնավորապես՝ գործարարների, համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպումները, դեսպանատուն այցը և այժմ օդանավակայանի ճանապարհին են»:

3. Իսկ **ժամը 15:33-ին** կայքն արդեն տեղադրել է «Ինչո՞ւ է չեղարկվել Պուտինի հետ հանդիպումը. Փաշինյանի խոսնակը մոլորեցնո՞ւմ է հանրությանը»

(https://www.armdaily.am/?p=51124&l=am) հրապարակումը, որում, ի թիվս նախկինում ասվածի, նաև գրված է. «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանը կամ անտեղյակ է, կամ մոլորեցնում է հանրությանը»։

4. 2019թ. մայիսի 30-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը՝ խնդրելով «քննության առնել այս հրապարակումները և ներկայացնել մասնագիտական էթիկայի դիտորդ մարմնի կարծիքը»։

5. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, առաջնորդվելով իր աշխատակարգով, 2019թ. հունիսի 4-ին նամակով դիմել է ArmDaily.am լրատվական կայքի տնօրեն Ծովինար Խաչատրյանին՝ խնդրելով այդ դիմումը քննելու համաձայնություն տալ: «Միաժամանակ, - նշված էր նամակում, - մեր եզրակացության անաչառությունն ապահովելու համար, կցանկանայինք իմանալ նաև Ձեր տեսակետը»։

6. 2019թ. հունիսի 7-ին Ծովինար Խաչատրյանը պատասխանել է ԴՄ նամակին, հավաստիացնելով, որ իրենք պատրաստ են համագործակցել, սակայն, միաժամանակ հղում անելով ԴՄ աշխատակարգին, խնդրել է պարզաբանել, արդյո՞ք ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը պատշաճ դիմող է։

7. Տիկին Խաչատրյանին պարզաբանվել է, որ լինելով ոչ ֆորմալ, կամավոր հասարակական հարթակ՝ Դիտորդ մարմինը դիմողի պատշաճ լինելու հարցը որոշում է առողջ բանականության սկզբունքից ելնելով։ Այսինքն՝ հենց ԴՄ նիստում է քվեարկությամբ որոշվելու, թե արդյո՞ք տվյալ դեպքում դիմողը պատշաճ է, և արդյո՞ք պետք է լրացուցիչ ստուգել պատշաճության հանգամանքը։ Այնուհետև տիկին Խաչատրյանը տեղեկացվել է, որ ԴՄ նիստում պատշաճության մասին որոշումն ընդունվելուց հետո անմիջապես կսկսվի բողոքի քննությունը։ Ավելի ուշ Ծովինար Խաչատրյանին տեղեկացվել է, որ ԴՄ-ն հավաստիացում ունի, որ ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը Վարչապետի մամուլի քարտուղարից նման բողոք բերելու լիազորություն է ունեցել, այսուհանդերձ ԴՄ նիստում քննարկվելու են դիմողի պատշաճության և բողոքը քննության ընդունելու հարցերը։ Դրական որոշումների դեպքում սկսվելու է քննությունը։ ԴՄ այս վերջին նամակին տիկին Խաչատրյանի արձագանքը եղել է հավանության նշանը միայն։

8. Դիտորդ մարմինը 2019թ. հունիսի 11-ի նիստում որոշել է, որ ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը պատշաճ դիմող է, և բողոքը ենթակա է քննության: Դրանից հետո հանձնարարվել է ԴՄ համակարգողին պատրաստել եզրակացության նախագիծ և ներկայացնել ԴՄ հաստատմանը:

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք

Հոդված 5. Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը

1. Լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

II ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

III. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ

տեղեկություններ,

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը,

...

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- ընդունելով, որ լրատվամիջոցների առաքելությունը ոչ միայն տեղեկություններ և գաղափարներ տարածելն է, այլ նաև դրանք վերլուծելը, մեկնաբանելը, գնահատելը,

- հիշեցնելով, որ ըստ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի, լրատվամիջոցը կարող է հիմնվել անանուն աղբյուրին և չբացահայտել այն, սակայն ըստ «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 1.1 կետի՝ նաև պարտավոր է «մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը»,

արձանագրում է հետևյալը.

1. ArmDaily.am առցանց լրատվամիջոցը, թեպետ իր անանուն աղբյուրներից ստացված տեղեկությունը փորձել է ճշտել վարչապետի մամուլի խոսնակից, այսուհանդերձ, իր եզրակացությունների և գնահատականների համար հիմք է ընդունել ոչ թե պաշտոնական պարզաբանումը, այլ՝ իր աղբյուրներից ստացածը, որոնց հավաստիությունը կասկած է հարուցում:

2. Վարչապետի մամուլի խոսնակի պարզաբանումից հետո հրապարակված մյուս երկու նյութերի ոճը հիմք է տալիս

ենթադրելու, որ լրատվամիջոցի նպատակը եղել է ոչ թե ընթերցողներին հավաստի տեղեկություններ տալը, այլ՝ վարչապետի՝ Ղազախստան կատարած այցը ամեն գնով ձախողված ներկայացնելը:

3. Դիտորդ մարմինը հիմնավորված չի համարում այն, որ լրատվամիջոցը լիովին վստահել է իր անանուն աղբյուրին և լիովին չի վստահել պաշտոնական աղբյուրին: Ընթերցողներին չմոլորեցնելու համար հարկ էր կամ հավասարապես չեզոք ներկայացնել դեպքերի երկու մեկնաբանությունները, կամ հստակ նշել, որ ներկայացվածը վարկած է, այլ ոչ թե վերջնական ճշմարտություն:

4. ArmDaily.am առցանց լրատվամիջոցը, չներկայացնելով որևէ պաշտոնական հաղորդագրություն օրակարգում Նիկոլ Փաշինյանի և Վլադիմիր Պուտինի հանդիպում նախատեսված լինելու մասին, հղում է կատարել միայն Փաշինյանի և Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի՝ Դաշնության խորհրդի ղեկավար Վալենտինա Մատվիենկոյի բանավոր հայտարարություններին, որոնք չեն կարող հանդիպում նախատեսված լինելու պաշտոնական հաղորդագրություններ համարվել, իսկ եզրակացություն կատարելիս անտեսել է Վլադիմիր Կարապետյանի այն տեղեկությունը, որ նման հանդիպում նախատեսված չի եղել:

5. Լրատվամիջոցը վերը բերված և ըստ էության չստուգված փաստի հիման վրա գրում է. «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանը կամ անտեղյակ է, կամ մոլորեցնում է հանրությանը», ինչը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով կարող է վիրավորական համարվել, քանի որ միտում ունի վարկաբեկելու Վլադիմիր Կարապետյանի՝ իբրև պաշտոնյայի համբավը:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի 2019թ. հուլիսի 22-ի նիստում, Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության

խմբագիր
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: